

Տեղեկանք

ՀՀ մարզերի համայնքներում 2011 թվականի ընթացքում իրականացված վարչական և ֆինանսական հսկողության արդյունքում կազմված ակտերում արձանագրված հիմնական խախտումների վերաբերյալ

ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի, 14.02.2011թ «Վարչական հսկողության 2011 թվականի աշխատանքային ծրագիրը հաստատելու մասին» N 20 հրամանի համաձայն նախատեսվել էր հսկողություն իրականացնել ՀՀ 10 մարզերի (ՀՀ Արարգածոտնի մարզ՝ 27, ՀՀ Արարատի մարզ՝ 16, ՀՀ Արմավիրի մարզ՝ 9, ՀՀ Գեղարքունիքի մարզ՝ 31, ՀՀ Լոռու մարզ՝ 20, ՀՀ Կոտայքի մարզ՝ 25, ՀՀ Շիրակի մարզ՝ 32, ՀՀ Սյունիքի մարզ՝ 20, ՀՀ Վայոց Ձորի մարզ՝ 12 և ՀՀ Տավուշի մարզ՝ 19) 211 համայնքներում: Հսկողությունն իրականացվել է աշխատանքային ծրագրին համապատասխան, բացառությամբ ՀՀ Արարատի մարզի Այնթափ համայնքի՝ որտեղ հսկողություն չի իրականացվել հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 77-րդ հոդվածի 3-րդ պարբերության պահանջը՝ այն է ստուգումների անցկացումը համայնքներում արգելվում է ընտրություններից մեկ ամիս առաջ և մինչև դրանց պաշտոնական ավարտը:

Ստորև ներկայացվում է հսկողության արդյունքում արձանագրված խախտումների վերաբերյալ տարեկան կտրվածքով տեղեկատվությունն՝ ըստ մարզերի:

ՀՀ Արագածոտնի մարզ

Նախատեսվել և իրականացվել է վարչական և ֆինանսական հսկողություն մարզի 27 համայնքների ղեկավարների և ավագանիների կողմից իրականացված լիազորությունների նկատմամբ:

Համայնքներում իրականացված հսկողության արդյունքում հայտնաբերվել են հետևյալ հիմնական խախտումները.

➤ Չի պահպանվել «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ պարբերության պահանջը, համաձայն որի համայնքների ղեկավարների և ավագանու անդամների կողմից ընդունված անհատական կամ ներքին իրավական ակտի նախաբանում կամ բովանդակության մեջ պետք է նշվի, թե որ նորմատիվ իրավական ակտի, դրա մասի համաձայն կամ ի կատարումն է ընդունվում: Խախտումը արձանագրվել է Դավթաշեն, Ջրամբար, Օհանվան, Շամիրամ, Սիփան, Սորիկ, Ակունք, Գեղադիր, Լեռնապար, Վ. Սասնաշեն, Ոսկեվագ, Ղասզարավան, Արուճ, Ագարակավան, Գետափ, Կարբի, Շղարշիկ, Թաթուլ, Ծաղկասար, Դիան, Միջնատուն և Ուջան համայնքներում:

➤ Չի պահպանվել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը, համաձայն որի համայնքի ավագանին ընդունում է

կանոնակարգ, որը կարգավորում է ավագանու գործունեությունը, նիստերի նախապատրաստումը և անցկացումը: Ավագանու նիստերն անցկացվում են ոչ պակաս, քան երկու ամիսը մեկ անգամ: Ավագանին կարող է անցկացնել արտահերթ նիստեր: Խախտումը արձանագրվել է Դավթաշեն, Շամիրամ, Սիփան, Գեղադիր, Վ Սասնաձեն, Ագարակավան, Կարբի, Շղարշիկ, Թաթուլ, Ծաղկասար և Դիան համայնքներում:

➤ Չի պահպանվել <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետի պահանջները, համաձայն որի ավագանին սահմանում է համայնքի կողմից մատուցված ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաճափերը: Խախտումը արձանագրվել է Վ. Սասնաշեն, Շղարշիկ, Ջրամբար և Սիփան համայնքներում:

➤ Չի պահպանվել <<Վարչական իրավախախտումների վերաբերյալ>> ՀՀ օրենքի 169.1-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները՝ համաձայն որի առանց թույլտվության ոգելիչ խմիչքների և /կամ/ ծխախոտի արտադրանքի վաճառք իրականացնելը, իսկ հանրային սննդի օբեկտներում՝ ոգելիչ խմիչքների և /կամ/ ծխախոտի արտադրանքի իրացում իրականացնելը առաջացնում է տուգանք: Խախտումը արձանագրվել է Վ. Սասնաձեն, Շղարշիկ, Ջրամբար և Սիփան համայնքներում:

ՀՀ Արարադի մարզ

Նախատեսվել և իրականացվել է վարչական և ֆինանսական հսկողություն մարզի 16 համայնքների ղեկավարների և ավագանու կողմից իրականացված լիազորությունների նկատմամբ:

Համայնքներում իրականացված հսկողության արդյունքում հայտնաբերվել են հետևյալ հիմանական խախտումները.

➤ Չի պահպանվել <<Առևտրի և ծառայությունների մասին>> ՀՀ օրենքի 17.1 հոդվածի 1-ին մասի պահանջը, համաձայն որի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից առևտրի և ծառայությունների ոլորտում հսկողությունն իրականացվում է սույն օրենքով վերապահված իրավասությունների շրջանակներում: Խախտումը արձանագրվել է Արևշատ, Գոռավան, Սայաթ Նովա, Սուրենավան, Արմաշ, Վանաշեն, Բյուրավան, Այնթափ և Դարակերտ համայնքներում:

➤ Չի պահպանվել <<Նախադպրոցական կրթության մասին>> ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջը, համաձայն որի պետական և համայնքային ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատությունները ոչ առևտրային կազմակերպություններ են: Խախտումը արձանագրվել է Տափերական և Գետազատ համայնքներում:

➤ Չի պահպանվել <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը՝ համաձայն որի նորմատիվ և ներքին իրավական ակտերը պետք է ունենան վերնագրեր: Իրավական ակտի վերնագիրը պետք է

համապատասխանի իրավական ակտի բովանդակությանը և հակիրճ տեղեկատվություն պարունակի դրա կարգավորման առարկայի մասին: Խախտումը արձանագրվել է Դաշտաքար, Գետագատ, Քաղցրաշեն, Բերքանուշ, Սուրենավան, գ. Արարատ և Դիմիտրով:

➤ Չի պահպանվել <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 9-րդ մասի պահանջը՝ համաձայն որի խախտվել է տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության հրապարակայնությունը և թափանցիկությունը: Խախտումը արձանագրվել է Դաշտաքար, Գետագատ, Քաղցրաշեն համայնքներում:

➤ Չի պահպանվել <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը, համաձայն որի համայնքի ղեկավարը օրենքով իրեն վերապահված լիազորությունների շրջանակում հսկողություն է իրականացնում առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտում: Խախտումը արձանագրվել է Արևշատ, Գոռավան, Սայաթ Նովա, Սուրենավան, Արմաշ, Վանաշեն, Բյուրավան, Այնթափ և Դարակերտ համայնքներում:

ՀՀ Արմավիրի մարզ

Նախատեսվել և իրականացվել է վարչական և ֆինանսական հսկողություն մարզի 9 համայնքի ղեկավարի և ավագանու կողմից իրականացված լիազորությունների նկատմամբ:

Համայնքներում իրականացված հսկողության արդյունքում հայտնաբերվել են հետևյալ հիմնական խախտումները.

➤ Չի պահպանվել <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջը, համաձայն որի քարտուղարը նիստի օրակարգի նախագիծը, դրանում ընդգրկված հարցերի որոշման նախագծերը և համապատասխան փաստաթղթերը նիստն սկսվելուց առնվազն յոթ օր առաջ տրամադրում է ավագանու անդամներին: Խախտումը արձանագրվել է Նալբանդյան և Նորապատ համայնքներում:

➤ Չի պահպանվել <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 11 մասի պահանջը, համաձայն որի համայնքի ղեկավարը անհատական ակտեր ընդունելուց հետո պարտավոր է երկօրյա ժամկետում այն ուղարկել համայնքի ավագանու անդամներին և փակցնել համայնքի ավագանու նստավայրում՝ բոլորի համար տեսանելի տեղում: Խախտումը արձանագրվել է Նալբանդյան և Տավրիկ համայնքներում:

➤ Չի պահպանվել <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին կետը, որի համաձայն, եթե գնման գինը գերազանցում է գնումների բազային միավորը, ապա պատվիրատուն կազմում է գնման ընթացակարգի արձանագրություն: Խախտումը արձանագրվել է Լուսազյուղ, Մեծամոր, Նորապատ, Հայթաղ և Արևադաշտ համայնքներում:

➤ Չի պահպանվել <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 61-րդ հոդվածի 2-րդ մասը, որի համաձայն անհատական իրավական այլ ակտերը՝ դրանք ընդունելու օրվան հաջորդող երեք օրվա ընթացքում ուղարկվում կամ հանձնվում են այն մարմիններին,

պաշտոնատար անձանց կամ քաղաքացիներին, որոնց վրա տարածվում են դրանք: Խախտումը արձանագրվել է Լուսազյուդ, Ծիածան, Տավրոիկ և Նալբանդյան համայնքներում:

➤ Չի պահպանվել ՀՀ կառավարության 2003թ. մայիսի 29-ի թիվ 750-ն որոշմամբ հաստատված թիվ 1 հավելվածի 10-րդ կետի բ ենթակետի պահանջը, համաձայն որի համակարգողը, անդորրագրերին համապատասխան կանխիկ ընդունված գումարներն առանձնացնելով ըստ հարկատեսակների, դրանք բանկի կանխիկ մուտքի անդորրագրերով (պարտադիր նշելով համայնքի անվանումը)՝ սահմանված կարգով մուտքագրում է տվյալ համայնքն սպասարկող տեղական գանձապետական բաժանմունքի (ՏԳԲ) համապատասխան գանձապետական հաշվին՝ գյուղական համայնքներում (մուտքերն ընդունող բանկից համայնքի հեռավորությունից կախված) վճարումներ ընդունողից գումարի ստացման օրվան հաջորդող 3 օրվա ընթացքում: Խախտումը արձանագրվել է Լուսազյուդ, Մեծամոր, Նորապատ, Արևադաշտ և Ծիածան համայնքներում:

ՀՀ Գեղարքունիքի մարզ

Նախատեսվել և իրականացվել է վարչական և ֆինանսական հսկողություն մարզի 31 համայնքների ղեկավարների և ավագանիների կողմից իրականացված լիազորությունների նկատմամբ:

Համայնքներում իրականացված հսկողության արդյունքում հայտնաբերվել են հետևյալ հիմնական խախտումները.

➤ Չի պահպանվել <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը, համաձայն որի տեղական ինքնակառավարման մարմինների նորմատիվ իրավական ակտերը, դրանք ընդունելուց հետո՝ սահմանված ժամկետներում, պետական իրավական փորձաքննության համար ուղարկվում են ՀՀ արդարադատության նախարարություն: Նշված ժամկետում ՀՀ արդարադատության նախարարություն չուղարկված նորմատիվ ակտերը համարվում են անվավեր: Խախտումը արձանագրվել է Լուսակունք, Մադինա, Արփունք, Ձորավանք, Գետիկ, Գեղաքար, Մ. Մասրիկ, Գեղամասար, Ծաղկաշեն, Վ. Գետաշեն, Նորաշեն, Ավազան, Նորաբակ, Կախակն, Ձորագյուղ, Այգուտ, Անտառամեջ, Ախպրաձոր, Ծափաթաղ, Ն. Շորժա, Վ. Շորժա, Տորֆավան, Թթուջուր, Վանևան, Ազատ, Բերդկունք համայնքներում և Վարդենիս քաղաքային համայնքում:

➤ Չի պահպանվել <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ պարբերության պահանջը, համաձայն որի անհատական կամ ներքին իրավական ակտի նախաբանում կամ բովանդակության մեջ պետք է նշվի, թե որ նորմատիվ իրավական ակտի, դրա մասի համաձայն կամ ի կատարումն է ընդունվում: Խախտումը արձանագրվել է Ավազան, Արփունք, Նորաբակ, Կախակն, Այգուտ, Ախպրաձոր, Մադինա, Ծաղկաշեն, Վ. Գետաշեն, Ձովաբեր, Անտառամեջ, Գեղամասար, Գեղաքար, Մ. Մասրիկ, Նորաշեն, Թթուջուր,

Ազատ, Բերդկունք, Ծափաթաղ, Ն. Շորժա, Նորատուա, Վ. Շորժա համայնքներում և Վարդենիս քաղաքային համայնքում:

➤ Չի պահպանվել <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը, համաձայն որի նորմատիվ և ներքին իրավական ակտերը պետք է ունենան վերնագրեր: Խախտումը արձանագրվել է Ավագան, Արփունք, Նորաբակ, Կախակն, Ջովաբեր, Ձորագյուղ, Այգուտ, Անտառամեջ, Ախպրաձոր, Գեղամասար, Գեղաքար, Մ. Մասրիկ, Նորաշեն, Տորֆավան և Թթուջուր համայնքներում:

➤ Չի պահպանվել <<Իրավական ակտերի մասին> ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը, համաձայն որի զգալի ծավալով իրավական ակտերի՝ բովանդակությամբ համասեռ հոդվածները (կետերը) միավորվում են գլուխներում: Անհրաժեշտության դեպքում գլուխները կարող են միավորվել բաժիններում, իսկ բաժինները՝ մասերում: Բաժիններն ու գլուխներն ունեն վերնագրեր և համարակալվում են արաբական կամ հռոմեական թվանշաններով: Բաժինների և գլուխների վերնագրերը պետք է համապատասխանեն դրանց բովանդակությանը: Խախտումը արձանագրվել է Ավագան, Արփունք, Նորաբակ, Կախակն, Ջովաբեր, Անտառամեջ, Գեղամասար, Գեղաքար, Մ. Մասրիկ, Նորաշեն, Տորֆավան և Թթուջուր համայնքներում:

➤ Չի պահպանվել <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը, համաձայն որի համայնքի ավագանին ընդունում է կանոնակարգ, որը կարգավորում է ավագանու գործունեությունը, նիստերի նախապատրաստումը և անցկացումը: Ավագանու նիստերն անցկացվում են ոչ պակաս, քան երկու ամիսը մեկ անգամ: Ավագանին կարող է անցկացնել արտահերթ նիստեր: Խախտումը արձանագրվել է Ն. Շորժա, Վ. Շորժա, Մ. Մասրիկ, Տորֆավան, Վանևան, Վ. Գետաշեն, Ձորավանք, Գետիկ, Գեղաքար համայնքներում և Վարդենիս քաղաքային համայնքում:

➤ Չի պահպանվել <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասի 6-րդ կետի պահանջը, համաձայն որի աշխատակազմի քարտուղարը կազմակերպում է համայնքի ղեկավարի և ավագանու կողմից քաղաքացիների ընդունելությունը, հսկողություն է իրականացնում նրանց առաջարկությունների, դիմումների ու բողոքների քննարկման և ընթացքի նկատմամբ: Խախտումը արձանագրվել է Ծովագյուղ, Ձորագյուղ, Ախպրաձոր, Վ. Գետաշեն, Գեղաքար, Վանևան, Ազատ համայնքներում և Վարդենիս քաղաքային համայնքում:

➤ Չի պահպանվել <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջը, համաձայն որի համայնքի ղեկավարը կատարում է քաղաքացիների ընդունելություն, օրենքով սահմանված կարգով քննության է առնում քաղաքացիների առաջարկությունները, դիմումներն ու բողոքները և ձեռնարկում է միջոցներ: Խախտումը արձանագրվել է Ծովագյուղ, Ձորագյուղ, Գեղաքար համայնքներում և Վարդենիս քաղաքային համայնքում:

➤ Չի պահպանվել <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը, համաձայն որի համայնքի ղեկավարը օրենքով իրեն

վերապահված լիազորությունների շրջանակում հսկողություն է իրականացնում առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտում: Խախտումը արձանագրվել է Ծովագյուղ և Ծաղկաշեն համայնքներում:

«Նոնու մարզ»

Նախատեսվել և իրականացվել է վարչական և ֆինանսական հսկողություն մարզի 20 համայնքների ղեկավարների և ավագանիների կողմից իրականացված լիազորությունների նկատմամբ:

Համայնքներում իրականացված հսկողության արդյունքում հայտնաբերվել են հետևյալ հիմնական խախտումները.

➤ Չի պահպանվել «Աշխատանքային օրենսգրքի 169-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջը, համաձայն որի ամենամյա արձակուրդի համար աշխատավարձի վճարումն իրականացվում է ոչ ուշ, քան ամենամյա արձակուրդն սկսելուց երեք օր առաջ: Խախտումը արձանագրվել է Ղուրսալի, Ճոճկան, Ծաղկաբեր, Գոգարան, Արևածագ համայնքներում:

➤ Չի պահպանվել «Դրամարկղային գործառնությունների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջը, համաձայն որի գանձապահի պարտականությունները չեն կարող դրվել կազմակերպության այն աշխատակիցների վրա, որոնք իրավունք ունեն ստորագրել դրամարկղային փաստաթղթերը, բացառությամբ այն կազմակերպությունների, որոնց աշխատակիցների թիվը չի գերազանցում երեքը: Խախտումը արձանագրվել է Շահումյան, Վահագնաձոր, Արևածագ, Քարաբերդ համայնքներում:

➤ Չի պահպանվել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը, համաձայն որի համայնքի ավագանին ընդունում է կանոնակարգ, որը կարգավորում է ավագանու գործունեությունը, նիստերի նախապատրաստումը և անցկացումը: Ավագանու նիստերն անցկացվում են ոչ պակաս, քան երկու ամիսը մեկ անգամ: Ավագանին կարող է անցկացնել արտահերթ նիստեր: Խախտումը արձանագրվել է Սարատովկա, Եղեգնուտ, Ձորագետ համայնքներում:

➤ Չի պահպանվել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 17-րդ ենթակետի պահանջը, համաձայն որի համայնքի ղեկավարը իր իրավասության շրջանակում ընդունում է որոշումներ, կազմում է արձանագրություններ եւ արձակում կարգադրություններ: Խախտումը արձանագրվել է Կողես, Հովնանաձոր, Շենավան համայնքներում:

➤ Չի պահպանվել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը, համաձայն որի համայնքի ղեկավարը օրենքով իրեն վերապահված լիազորությունների շրջանակում հսկողություն է իրականացնում առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտում: Խախտումը արձանագրվել է Սարատովկա, Եղեգնուտ, Շահումյան, Վահագնաձոր, Դսեղ, Շիրակամուտ, Մարգահովիտ,

Գեղասար, Ձորագետ, Ճոճկան, Ծաղկաբեր, Գոգարան, Գարգառ, Արևածագ, Այգեհատ, Շենավան համայնքներում:

➤ Չի պահպանվել <<Առևտրի և ծառայությունների մասին>> ՀՀ օրենքի 17.1 հոդվածի պահանջը, համաձայն որի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից առևտրի և ծառայությունների ոլորտում հսկողությունն իրականացվում է սույն օրենքով վերապահված իրավասությունների շրջանակներում: Խախտումը արձանագրվել է Սարատովկա, Ղուրսալի, Եղեգնուտ, Շահումյան, Վահագնաձոր, Դսեղ, Շիրակամուտ, Մարգահովիտ, Գեղասար, Ձորագետ, Ճոճկան, Ծաղկաբեր, Գոգարան, Գարգառ, Արևածագ, Այգեհատ, Շենավան համայնքներում:

➤ Չի պահպանվել <<Համայնքային ծառայության մասին>> ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին կետի պահանջները՝ համաձայն որի համայնքային ծառայողի ծառայողական գործունեության ընթացքն արտացոլվում է նրա անձնական գործում, որը վարում է համապատասխան համայնքի ղեկավարի աշխատակազմը: Խախտումը արձանագրվել է Եղեգնուտ, Կողես, Գարգառ, Շենավան համայնքներում:

ՀՀ Կոպայքի մարզ

Նախատեսվել և իրականացվել է վարչական և ֆինանսական հսկողություն մարզի 25 համայնքների ղեկավարների և ավագանիների կողմից իրականացված լիազորությունների նկատմամբ:

Համայնքներում իրականացված հսկողության արդյունքում հայտնաբերվել են հետևյալ հիմնական խախտումները.

➤ Չի պահպանվել <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը, համաձայն որի տեղական ինքնակառավարման մարմինների նորմատիվ իրավական ակտերը, դրանք ընդունելուց հետո՝ սահմանված ժամկետներում, պետական իրավական փորձաքննության համար ուղարկվում են Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն: Նշված ժամկետում Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն չուղարկված նորմատիվ ակտերը համարվում են անվավեր: Խախտումը արձանագրվել է Ֆանտան, Հանքավան, Ջրառատ, Կաթնաղբյուր, Նոր Երզնկա, Բուժական, Կարենիս, Սարալանջ, Ծաղկաձոր համայնքներում:

➤ Չի պահպանվել <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ պարբերության պահանջը, համաձայն որի անհատական կամ ներքին իրավական ակտի նախաբանում կամ բովանդակության մեջ պետք է նշվի, թե որ նորմատիվ իրավական ակտի, դրա մասի համաձայն կամ ի կատարումն է ընդունվում: Խախտումը արձանագրվել է Չարենցավան, Ֆանտան, Հանքավան, Հրազդան, Ջրառատ, Կաթնաղբյուր, Սևաբերդ, Զովաշեն, Ձորաղբյուր, Աբովյան համայնքներում:

➤ Չի պահպանվել <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 13-րդ մասի պահանջը, համաձայն որի իրավական ակտում կիրառվող ամսաթվերում տարեթիվը և ամսաթիվը գրվում են թվերով, իսկ ամիսը՝ տառերով: Խախտումը արձանագրվել է Չարենցավան, Ֆանտան, Հանքավան, Հրազդան, Ջրառատ, Կաթնաղբյուր, Գետարգել համայնքներում:

➤ Չի պահպանվել <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջը, համաձայն որի իրավաստեղծ մարմինն իրավական ակտում փոփոխություններ կամ լրացումներ կարող է կատարել միայն նույն տեսակի իրավական ակտով: Խախտումը արձանագրվել է Ֆանտան, Հանքավան, Հրազդան, Սևաբերդ, Աբովյան, Հացավան համայնքներում:

➤ Չի պահպանվել <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի երկրորդ պարբերության պահանջը՝ համաձայն որի համայնքի ավագանին ընդունում է կանոնակարգ, որը կարգավորում է ավագանու գործունեությունը, նիստերի նախապատրաստումը և անցկացումը: Ավագանու նիստերը անցկացվում են ոչ պակաս, քան երկու ամիսը մեկ անգամ: Ավագանին կարող է անցկացնել արտահերթ նիստեր: Խախտումը արձանագրվել է Ֆանտան, Հանքավան, Ջրառատ, Կաթնաղբյուր, Նոր Երզնկա, Սևաբերդ, Ջովաշեն, Գեղադիր, Ջրաբեր, Կարենիս, Ծաղկաձոր, Ջովք, Հացավան, Քարաշամբ համայնքներում:

➤ Չի պահպանվել <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 12.1-րդ հոդվածի պահանջը, համաձայն որի հրապարակումն իրականացվում է համայնքներում՝ համայնքի ավագանու նստավայրում դրանք փակցնելու միջոցով, ինչպես նաև այն վայրերում, որոնք մատչելի են համայնքի յուրաքանչյուր մասի բնակչի համար՝ առնվազն մեկ տեղ յուրաքանչյուր երկու հազար բնակչի համար: Խախտումը արձանագրվել է Չարենցավան, Ֆանտան, Հանքավան, Հրազդան, Ջրառատ, Կաթնաղբյուր, Նոր Երզնկա, Սևաբերդ, Ջովաշեն, Հացավան համայնքներում:

➤ Չի պահպանվել <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ կետի 8-րդ ենթակետ պահանջը, համաձայն որի քարտուղարի կողմից ավագանու որոշումները 7-օրյա ժամկետում առաքվում են մարզպետարան: Խախտումը արձանագրվել է Չարենցավան, Ֆանտան, Հանքավան, Ջրառատ, Կաթնաղբյուր, Նոր Երզնկա, Սևաբերդ, Ջովաշեն, Բուժական, Ձորաղբյուր, Գեղադիր, Հատիս, Ջրաբեր, Կարենիս, Սարալանջ, Վերին Պտղնի, Ջովք, Աբովյան, Ողջաբերդ, Գետարգել, Քարաշամբ, Թեղենիք համայնքներում:

➤ Չի պահպանվել <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը, համաձայն որի համայնքի ղեկավարը օրենքով իրեն վերապահված լիազորությունների շրջանակում հսկողություն է իրականացնում առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտում: Խախտումը արձանագրվել է

Չարենցավան, Ֆանտան, Հրազդան, Ջրառատ Նոր Երզնկա, Սևաբերդ, Բուժական, Ձորաղբյուր, Գեղադիր, Ջրաբեր, Ծաղկաձոր Քարաշամբ համայնքներում:

➤ Չի պահպանվել <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի պահանջները, համաձայն որի տեղական տուրքերի դրույքաչափերը, սույն օրենքով նախատեսված դրույքաչափերի սահմաններում, սահմանում է համայնքի ավագանին՝ համայնքի ղեկավարի ներկայացմամբ՝ համայնքի տարեկան բյուջեն հաստատելուց առաջ: Խախտումը արձանագրվել է Չարենցավան, Հրազդան համայնքներում:

➤ Չի պահպանվել <<Առևտրի և ծառայությունների մասին>> ՀՀ օրենքի 17.1 հոդվածի պահանջը, համաձայն որի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից առևտրի և ծառայությունների ոլորտում հսկողությունն իրականացվում է սույն օրենքով վերապահված իրավասությունների շրջանակներում: Խախտումը արձանագրվել է Չարենցավան, Ֆանտան, Հրազդան, Ջրառատ, Կաթնաղբյուր Նոր Երզնկա, Բուժական, Ձորաղբյուր, Գեղադիր, Ջրաբեր, Կարենիս, Սարալանջ, Ծաղկաձոր, Զովք, Քարաշամբ համայնքներում:

➤ Չի պահպանվել <<Արխիվային գործի մասին>> ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը, համաձայն որի պետական մարմինները, պետական կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմինները, պետական հիմնարկները եւ կազմակերպություններն իրենց գործունեության ընթացքում առաջացած արխիվային փաստաթղթերի համալրման, հաշվառման, պահպանության եւ օգտագործման նպատակով մինչև պետական կամ համայնքային արխիվ մշտական պահպանության հանձնելը պարտավոր են ստեղծել աշխատակազմի արխիվներ: Խախտումը արձանագրվել է Ֆանտան, Կաթնաղբյուր, Կարենիս համայնքներում:

➤ Չի պահպանվել ՀՀ կառավարության 11.07.2002թ N 1146-Ն որոշմամբ հաստատված թիվ 2 հավելվածի 2-րդ կետի պահանջը, համաձայն որի իրավական ակտն ընդունող մարմինները պարտավոր են պահել իրենց ընդունած իրավական ակտերի հաշվառման մատյան: Խախտումը արձանագրվել է Ֆանտան, Հրազդան, Ջրառատ, Կաթնաղբյուր, Նոր Երզնկա, Գեղադիր, Ջրաբեր, Վերին Պտղնի, Աբովյան, Ողջաբերդ, Գետարգել, Քարաշամբ, Թեղենիք համայնքներում:

ՀՀ Ծիրակի մարզ

Նախատեսվել և իրականացվել է վարչական և ֆինանսական հսկողություն մարզի 32 համայնքների ղեկավարների և ավագանիների կողմից իրականացված լիազորությունների նկատմամբ:

Համայնքներում իրականացված հսկողության արդյունքում հայտնաբերվել են հետևյալ հիմնական խախտումները.

➤ Չի պահպանվել <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 34-րդ հոդվածը 1-ին մասը, որի համաձայն սահմանված կարգով նորմատիվ բնույթի որոշումները պետք է ուղարկել ՀՀ արդարադատության նախարարություն՝ պետական իրավական փորձաքննության: Խախտումը արձանագրվել է Քարաբերդ, Շիրակական, Թավշուտ, Ազատական, Բագրավան, Բազդյուղ, Հովիտ, Կապս, Փոքրաշեն, Սալուտ, Բանդիվան, Տուֆաշեն, Հովունի, Մեղրաշատ, Մուսաեյան, Վահրամաբերդ, Առափի, Արևշատ, Ջաջուռական, Կարմրաքար, Կրասար, Մեղրաշեն, Սառնաղբյուր համայնքներում և Մարալիկ քաղաքային համայնքում:

➤ Չի պահպանվել <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 2-րդ մասը, որի համաձայն համայնքի ղեկավարի կարգադրությունների համարների հերթականությունը պետք է վերսկսվի յուրաքանչյուր տարվա հունվարի 1-ից: Խախտումը արձանագրվել է Թավշուտ, Բազդյուղ, Հովիտ, Կապս, Սալուտ, Տուֆաշեն, Հովունի Մուսաեյան, Վարդաղբյուր, Քարաբերդ, Առափի, Արևշատ, Ջաջուռական, Կարմրաքար, Կարմրական, Կրասար և Սառնաղբյուր համայնքներում:

➤ Չի պահպանվել <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասը, համաձայն որի նորմատիվ և ներքին իրավական ակտերը պետք է ունենան վերնագրեր: Իրավական ակտի վերնագիրը պետք է համապատասխանի իրավական ակտի բովանդակությանը և հակիրճ տեղեկատվություն պարունակի դրա կարգավորման առարկայի մասին: Խախտումը արձանագրվել է Բազդյուղ, Կարմրաքար և Կարմրական համայնքներում:

➤ Չի պահպանվել <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 44-րդ հոդվածի 2-րդ մասը, որի համաձայն որոշումների պաշտոնական տեքստի վերջին էջի տեքստից հետո պետք է նշվի համայնքի ղեկավարի կողմից իրավական ակտի ստորագրման տարին, ամիսը, ամսաթիվը և ընդունման վայրը: Խախտումը արձանագրվել է Կարմրական, Սիզավետ, Առափի և Թավշուտ համայնքներում:

➤ Չի պահպանվել <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 11-րդ մասը, որի համաձայն արգելվում է իրավական ակտում կատարել բառերի կամ տերմինների անհարկի կրճատումներ, ինչպես նաև բառերի կամ տերմինների հապավումներ: Խախտումը արձանագրվել է Կարմրական, Կապս, Առափի և Թավշուտ համայնքներում:

➤ Չի պահպանվել <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 13-րդ մասը, որի համաձայն իրավական ակտում կիրառվող ամսաթվերում տարեթիվը և ամսաթիվը գրվում են թվերով, իսկ ամիսը՝ տառերով: Խախտումը արձանագրվել է Կարմրական, Սիզավետ, Առափի, Կապս և Թավշուտ համայնքներում:

➤ Չի պահպանվել <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ պարբերությունը, որի համաձայն, նիստերի օրակարգերի նախագծերը, դրանցում ընդգրկված հարցերի որոշումների նախագծերը և համապատասխան փաստաթղթերը պետք է տրամադրվի համայնքի ավագանու անդամներին նիստն սկսվելուց առնվազն յոթ օր առաջ: Խախտումը արձանագրվել է Առափի, Հովունի, Մեղրաշատ, Մուսաեյան, Սիզավետ, Վահրամաբերդ, Ոսկեհասկ, Արևշատ, Ախուրյան, Ջաջուռական,

Կարմրաքար, Կրասար, Քարաբերդ, Սառնաղբյուր, Թավշուտ, Ազատավան Բագրավան, Բազգյուղ, Հովիտ, Տուֆաշեն, Կարմրավան, Փոքրաշեն, Սալուտ, Հառիճ, Այգաբաց, Բանդիվան, Վարդաղբյուր համայնքներում և Մարալիկ քաղաքային համայնքում:

➤ Չի պահպանվել <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը, որի համաձայն համայնքի ավագանին սույն օրենքով սահմանված կարգով՝ հաստատում է համայնքի բյուջեն, բյուջեի՝ համայնքի ղեկավարի առաջարկած փոփոխությունները և բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը: Խախտումը արձանագրվել է Հովունի, Մեղրաշատ, Արևշատ, Կրասար, Սառնաղբյուր, Բագրավան, Տուֆաշեն համայնքներում և Մարալիկ քաղաքային համայնքում:

➤ Չի պահպանվել <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները, որի համաձայն համայնքի ղեկավարը, եռամսյակը մեկ՝ մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 15-ը, բյուջեի կատարման ընթացքի մասին հաղորդումներ է ներկայացնում համայնքի ավագանուն և համապատասխան մարզպետին: Համայնքի ղեկավարը սույն մասում նշված հաղորդումը մարզպետին ներկայացնում է պետական լիազորված մարմնի սահմանած ձևով: Խախտումը արձանագրվել է Առափի, Հովունի, Մեղրաշատ, Մուսաեյան, Սիզավետ, Ոսկեհասկ, Արևշատ, Կարմրաքար, Կրասար, Քարաբերդ, սառնաղբյուր, Թավշուտ, Բագրավան, Բազգյուղ, Հովիտ, Կարմրավան, Փոքրաշեն, Սալուտ, Այգաբաց, Բանդիվան, Վարդաղբյուր համայնքներում և Մարալիկ քաղաքային համայնքում:

➤ Չի պահպանվել <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները, որի համաձայն համայնքի ղեկավարը համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը համայնքի ավագանուն ներկայացնում է մինչև հաշվետու բյուջետային տարվան հաջորդող տարվա մարտի 1-ը: Խախտումը արձանագրվել է Հովունի, Մեղրաշատ և Կրասար համայնքներում:

ՀՀ Սյունիքի մարզ

Նախատեսվել և իրականացվել է վարչական և ֆինանսական հսկողություն մարզի 20 համայնքների ղեկավարների և ավագանիների կողմից իրականացված լիազորությունների նկատմամբ:

Համայնքներում իրականացված հսկողության արդյունքում հայտնաբերվել են հետևյալ հիմանական խախտումները.

➤ Չի պահպանվել <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ պարբերության պահանջը. համաձայն որի նիստի օրակարգի հարցերի հեղինակները պետք է ներկայացնեն որոշման նախագծեր, յուրաքանչյուր նախագծին կցվում են դրա ընդունման անհրաժեշտության հիմնավորումները և յուրաքանչյուր որոշման նախագծի

իրականացման ֆինանսական ծախսերի նախահաշիվները, որոշման նախագծերը և համապատասխան փաստաթղթերը նիստը սկսվելուց առնվազն 7 օր առաջ տրամադրվում են ավագանու անդամներին: Խախտումը արձանագրվել է Աճանան, Անտառաշատ, Լեռնաձոր, Նորաշենիկ, Չափնի, Խնածախ, Կոռնիձոր, Վերիշեն, Տանձատափ, Քարահունջ, Դաստակերտ, Բոնակոթ, Թասիկ, Իշխանասար, Լձեն, Շենաթաղ, Սպանդարյան, Տոլրս, Վահրավար և Վարդանիձոր համայնքներում:

➤ Չի պահպանվել <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 12.1-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները, համաձայն որի ավագանու հերթական նիստից առնվազն 7 օր առաջ համայնքի ղեկավարը հրապարակում է տեղեկատվություն ավագանու նիստի ժամանակի, վայրի վերաբերյալ և նիստի օրակարգը: Խախտումը արձանագրվել է Աճանան, Անտառաշատ, Լեռնաձոր, Նորաշենիկ, Չափնի, Խնածախ, Կոռնիձոր, Վերիշեն, Տանձատափ, Քարահունջ, Դաստակերտ, Բոնակոթ, Թասիկ, Իշխանասար, Լձեն, Շենաթաղ, Սպանդարյան, Տոլրս, Վահրավար և Վարդանիձոր համայնքներում:

➤ Չի պահպանվել <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը՝ համաձայն որի իրավական ակտը կարող է պարունակել անվանում, հիմնական մաս, եզրափակիչ մաս կամ անցումային դրույթներ: Խախտումը արձանագրվել է Խնածախ, Կոռնիձոր, Լձեն և Վահրավար համայնքներում:

➤ Չի պահպանվել <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը՝ համաձայն որի նորմատիվ և ներքին իրավական ակտերը պետք է ունենան վերնագրեր: Իրավական ակտի վերնագիրը պետք է համապատասխանի իրավական ակտի բովանդակությանը և հակիրճ տեղեկատվություն պարունակի դրա կարգավորման առարկայի մասին: Խախտումը արձանագրվել է Խնածախ, Կոռնիձոր, Թասիկ, Լձեն, Սպանդարյան և Վահրավար համայնքներում:

➤ Չի պահպանվել <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջը՝ համաձայն որի իրավական այլ ակտերում դրույթները շարադրվում են հերթական համար ունեցող կետերի տեսքով: Կետերը կարող են բաժանվել միայն համարակալված ենթակետերի, իսկ ենթակետերը միայն համարակալված պարբերությունների: Կետերը, ենթակետերը և պարբերությունները վերնագրեր չեն ունենում: Խախտումը արձանագրվել է Անտառաշատ, Խնածախ, Կոռնիձոր, Իշխանասար և Վահրավար համայնքներում:

ՀՀ Վայոց Ձորի մարզ

Նախատեսվել և իրականացվել է վարչական և ֆինանսական հսկողություն մարզի 12 համայնքների ղեկավարների և ավագանու կողմից իրականացված լիազորությունների նակատմամբ:

Համայնքներու իրականացված հսկողության արդյունքում հայտնաբերվել են հետևյալ հիմնական խախտումները.

➤ Չի պահպանվել «<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ պարբերության պահանջը, համաձայն որի անհատական կամ ներքին իրավական ակտի նախաբանում կամ բովանդակության մեջ պետք է նշվի, թե որ նորմատիվ իրավական ակտի, դրա մասի համաձայն կամ ի կատարումն է ընդունվում: Խախտումը արձանագրվել է Խնձորուտ, Հորբատեղ, Մալիշկա, Սերս, Հերիեր, Արենի, Քարագլուխ, Սալի համայնքներում:

➤ Չի պահպանվել «<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթը, համաձայն որի իրավական ակտի հերթական համարը սահմանում է իրավական ակտն ընդունող մարմինը՝ միայն արաբական թվանշաններով: Համարների հերթականությունը վերսկսվում է յուրաքանչյուր տարվա հունվարի 1-ից: Գերատեսչական նորմատիվ իրավական ակտերը պետք է համարակալվեն միայն ամբողջական թվանշաններով: Խախտումը արձանագրվել է Թառաթումբ, Հորբատեղ, Սալի համայնքներում:

➤ Չի պահպանվել «<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը, համաձայն որի իրավական ակտի վերնագիրը պետք է համապատասխանի իրավական ակտի բովանդակությանը և հակիրճ տեղեկատվություն պարունակի դրա կարգավորման առարկայի մասին: Խախտումը արձանագրվել է Սերս, Խնձորուտ, Հերիեր, Արենի, Քարագլուխ, Մալիշկա համայնքներում:

➤ Չի պահպանվել «<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ պարբերության պահանջը, համաձայն որի համայնքի ավագանու որոշման մեջ նշվում են որոշման նախագծին կողմ, դեմ և ձեռնպահ քվեարկած ավագանու անդամների ազգանունները, որոնց դիմաց նրանք ստորագրում են: Խախտումը արձանագրվել է Սալի համայնքում:

➤ Չի պահպանվել «<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 69-րդ և «<Բյուջետային համակարգի մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի պահանջները, համաձայն որոնց համայնքի ղեկավարը եռամսյակը մեկ անգամ ՀՀ բյուջետային օրենսդրությամբ սահմանված ժամկետում բյուջեի ընթացքի մասին հաղորդումներ է ներկայացնում համայնքի ավագանուն, իսկ բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը համայնքի ավագանուն ներկայացնում է մինչև հաշվետու բյուջետային տարվան հաջորդող տարվա մարտի 1-ը: Խախտումը արձանագրվել է Հորբատեղ, Սերս, Սալի համայնքներում:

ՀՀ Տավուշի մարզ

Նախատեսվել և իրականացվել է վարչական և ֆինանսական հսկողություն մարզի 19 համայնքների ղեկավարների և ավագանիների կողմից իրականացված լիազորությունների նկատմամբ:

Համայնքներում իրականացված հսկողության արդյունքում հայտնաբերվել են հետևյալ հիմնական խախտումները.

➤ Չի պահպանվել «Գանձապետական համակարգի մասին» ՀՀ օրնքի 9-րդ հոդվածի 1-ին մասի բ ենթակետի լիազոր պահանջը, համաձայն որի մարմնի կողմից սահմանված ներքին աուդիտի անցկացման կարգին համապատասխան՝ գլխավոր ֆինանսիստը ապահովում է ներքին աուդիտի համակարգի առկայությունը, որը ներառում է պետական մարմնում և համակարգի պետական հիմնարկներում ֆինանսական հարցերի վերաբերյալ հաստատված ակտերի պահանջների կատարման գնահատումն ու հաշվապահական հաշվառման գրանցումների մեջ անհամապատասխանությունների բացահայտումը և դրանց ճշգրտման ապահովումը: Խախտումը արձանագրվել է Աղավնավանք, Դիտավան, Կոթի, Խաշթառակ, Բաղանիս, Այգեպար, Գետահովիտ, Իծաքար, Կողբ, Մովսես, Այրում, Հաղարծին, Պտղավան և Թեղուտ համայնքներում:

➤ Չի պահպանվել «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի գ ենթակետի պահանջը, համաձայն որի համայնքի բյուջեի հաշվեկշռվածությունը՝ յուրաքանչյուր տարվա համայնքի բյուջեի սույն օրենքի 2-րդ հոդվածում նշված յուրաքանչյուր բաղկացուցիչ մասում նախատեսված հաշվարկային-դրամարկղային ելքերի հանրագումարը չպետք է գերազանցի համայնքի բյուջեի համապատասխան մասում տվյալ տարում նախատեսված հաշվարկային-դրամարկղային մուտքերի հանրագումարին: Խախտումը արձանագրվել է Դիտավան, Բաղանիս, Այգեպար, Գետահովիտ և Մովսես համայնքներում:

➤ Չի պահպանվել ՀՀ կառավարության 2003թ. մայիսի 29-ի թիվ 750-ն որոշմամբ հաստատված թիվ 1 հավելվածի 10-րդ կետի բ ենթակետի պահանջը, համաձայն որի համակարգողը, անդորրագրերին համապատասխան կանխիկ ընդունված գումարներն առանձնացնելով ըստ հարկատեսակների, դրանք բանկի կանխիկ մուտքի անդորրագրերով (պարտադիր նշելով համայնքի անվանումը)՝ սահմանված կարգով մուտքագրում է տվյալ համայնքն սպասարկող տեղական գանձապետական բաժանմունքի (ՏԳԲ) համապատասխան գանձապետական հաշվին՝ գյուղական համայնքներում (մուտքերն ընդունող բանկից համայնքի հեռավորությունից կախված) վճարումներ ընդունողից գումարի ստացման օրվան հաջորդող 3 օրվա ընթացքում: Խախտումը արձանագրվել է Դիտավան և Խաշթառակ համայնքներում:

➤ Չի պահպանվել ՀՀ կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 44-րդ կետի պահանջը, համաձայն որի հողամասերը վարձակալության տրամադրվում են մրցույթով՝ բացառությամբ սույն որոշմամբ սահմանված դեպքերի: Խախտումը արձանագրվել է Աղավնավանք, Կոթի, Բաղանիս, Աչաջուր, Արծվաբերդ, Սևքար, Վ.Կ. Աղբյուր և Ոսկեվան համայնքներում: